

**«ՎԵՐԱՄԲԱՐԶ-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ՃԱՆԱՊԱՐԿԱՅԻՆ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՏԵԽՆԻԿ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

«Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)» մասնագիտության «Տեխնիկ» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են՝

1. համապատասխան պետական կրթական (որակավորման) չափորոշիչի բոլոր մոդուլների ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է հարց ու պատասխանի կամ համալիր թեստային հարցման միջոցով: Թեստը բաղկացած է վերոնշյալ բոլոր ուսումնառության արդյունքներին վերաբերող նյութերից՝ ընդհանուր թվով 40 հարցից:

Արդյունքը համարվում է բավարար, եթե ճիշտ պատասխաններ են տրվել թեստային առաջադրանքի հարցերի առնվազն 75 %-ին:

2. Մասնագիտական կարողությունները, որոնց ստուգման համար պահանջվում է սահմանված ժամանակում կատարել հետևյալ գործողությունները՝

- մեքենաների և սարքավորումների ընդունում, զելում և հանձնում շահագործման,
- կազմակերպում է վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների տեխնիկական սպասարկումներ,
- կազմակերպում է վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների արտադրական շահագործում,
- մասնակցում է վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործական և լաբորատոր փորձարկումներին,
- կազմակերպում է վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային կազմակերպում է վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների տեխնիկական արատորոշում և նորոգում,
- ապահովում է կենսագործունեության անվտանգություն և բնապահպանական պահանջների իրականացում ՎՏՃՄ և Մ շահագործման ժամանակ,
- կազմակերպում է վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների ապամոնտաժում, մոնտաժում, փոխադրում և պահպանում,

- իրականացնում է մարդկային ռեսուրսների կառավարում:

Արդյունքը համարվում է բավարար, եթե վերոնշյալ գործողությունների առնվազն 90%-ը կատարվել է չափորոշիչներով նախատեսված չափանիշներին համապատասխան՝ պահպանելով աշխատանքի անվտանգության և հիգիենայի կանոններն ու նորմերը:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հ/Հ	Անվանում	Նկարագիր
1	Մասնագիտության անվանումը	Տեխնիկ՝ վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)
2	Դերը	Կազմակերպում է վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների (ՎՏՀՄ և Ս) ընդունում, զելում, փորձարկում և շահագործում: Իրականացնում է ՎՏՀՄ և Ս անսարքությունների բացահայտումը, կազմակերպում է ՎՏՀՄ և Ս տեխնիկական սպասարկումները, ապամոնտաժում-մոնտաժումը, փոխադրումը, պահպանումը: Վերահսկում է ՎՏՀՄ և Ս շահագործող անձնակազմի ամենօրյա աշխատանքները, կենսագործունեության անվտանգության և բնապահպանական նորմերի պահպանումը: Կատարում է փաստաթղթերի ձևակերպումներ, պարզ հաշվարկներ, ներկայացնում է հաշվետվություններ:
3	Խնդիրների բնագավառները	
3.1	<u>Խնդիրների բնագավառ 1.</u> Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների ընդունում, զելում և հանձնում շահագործման	
3.1.1	Աշխատանքային գործընթացները	<ul style="list-style-type: none"> - Իրականացնում է ՎՏՀՄ և Ս ընդունում, - Կատարում է նոր ստացված ՎՏՀՄ և Ս զելում, - Իրականացնում է ՎՏՀՄ և Ս շահագործական փորձարկում:
3.1.2	Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Առկա են շահագործական փաստաթղթերը և ՎՏՀՄ մեքենաները և սարքավորումները լրակազմ են, • Առկա է սահմանված կանոններով և ռեժիմներով կատարված զելման գործընթացի և դրա արդյունքների գրանցումը, • Գրանցամատյանում առկա են սահմանված ընթացակարգով իրականացված շահագործական փորձարկման արդյունքները, • Առկա է համապատասխան արձանագրություն ՎՏՀՄ և Ս զելման և շահագործական փորձարկման վերաբերյալ:
3.2	<u>Խնդիրների բնագավառ 2.</u> Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների տեխնիկական սպասարկումների կազմակերպում	

Հ/Հ	Անվանում	Նկարագիր
3.2.1	Աշխատանքային գործընթացները	<ul style="list-style-type: none"> - Կազմակերպում է հերթափոխային տեխնիկական սպասարկում, - Կազմակերպում է պարբերական տեխնիկական սպասարկումներ՝ SU-1, SU-2, SU-3, - Կազմակերպում է ՎՏՃ մեքենաների և սարքավորումների սեզոնային տեխնիկական սպասարկումներ, - Անհրաժեշտության դեպքում կազմակերպում է հատուկ տեխնիկական սպասարկում, - Կազմակերպում է ՎՏՃ մեքենաների և սարքավորումների տեխնիկական զննման անցկացում:
3.2.2	Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Հաշվառման մատյանում առկա է գրանցում ՎՏՃԱՄ և Ս հերթափոխային շահագործական տեխնիկական վիճակի վերաբերյալ, • Սահմանված պահանջներով և որակական չափանիշներին համապատասխան կատարված պարբերական տեխնիկական սպասարկումների արդյունքները գրանցված են ՎՏՃ մեքենաների և սարքավորումների տեխնիկական փաստաթղթերում, • Տեխնիկական փաստաթղթերում առկա են գրանցումներ որակական չափանիշներին համապատասխան կատարված ՎՏՃ մեքենաների և սարքավորումների սեզոնային տեխնիկական սպասարկումների վերաբերյալ, • Տեխնիկական փաստաթղթերում առկա են գրառումներ որակական չափանիշներին համապատասխան կատարված ՎՏՃ մեքենաների և սարքավորումների հատուկ տեխնիկական սպասարկում կատարելու վերաբերյալ, • Տեխնիկական զննման արդյունքները նշված են ՎՏՃ մեքենաների և սարքավորումների տեխնիկական կտրոններում:
3.3	<u>Խնդիրների բնագավառ 3. Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների արտադրական շահագործման կազմակերպում</u>	
3.3.1	Աշխատանքային գործընթացները	<ul style="list-style-type: none"> - Շահագործող անձնակազմին բացատրում է ՎՏՃԱՄ և Ս նշանակությունը, դասակարգումը, կառուցվածքը, դրանց աշխատանքի սկզբունքը և աշխատանքային սխեմաները, - Աշխատանքային պայմաններից ելնելով՝ կատարում է ՎՏՃԱՄ և Ս շահագործական արտադրողականության և տեսակարար ենթագատարության հաշվարկ՝ դրանց ճիշտ ընտրության և արդյունավետ շահագործման նպատակով, - Կատարում է հիմնական և օժանդակ ՎՏՃԱՄ և Ս և դրանց լրակազմի ընտրություն՝ ըստ աշխատանքների բնույթի և կատարման ժամկետների, - Կատարում է վառելիքաքսանյութերի և շահագործական նյութերի ընտրություն՝ աշխատանքային և կլիմայական պայմաններին համապատասխան:
3.3.2	Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Շահագործող անձնակազմը տեղեկացված է և ընկալում է ՎՏՃԱՄ և Ս նշանակությունը, դասակարգումը, կառուցվածքը, աշխատանքի

Հ/Հ	Անվանում	Նկարագիր
		<p>սկզբունքը և աշխատանքային ռեժիմները,</p> <ul style="list-style-type: none"> • ՎՏՇՃՄ և Ս հիմնական շահագործական ցուցանիշների հաշվարկը ճիշտ է կատարված, • հիմնական և օժանդակ մեքենաների և դրանց լրակազմի ընտրությունը ճիշտ է կատարված, • վառելիքաքսանյութերը և շահագործական նյութերի ընտրությունը ճիշտ է կատարված:
3.4		<p><u>Խնդիրների բնագավառ 4. Մարդկային ռեսուրսների կառավարում</u></p>
3.4.1	<p>Աշխատանքային գործընթացները</p>	<ul style="list-style-type: none"> - Պատրաստում է աշխատակիցների աշխատանքային ժամանակացույցը և վերահսկում է դրա կատարումը, - Կատարում է աշխատանքի բաժանում և տալիս հանձնարարականներ, - Վերահսկում է աշխատակիցների աշխատանքը և հարթում է աշխատակիցների միջև առաջացած կոնֆլիկտները, - Ներդնում է մոտիվացիոն համակարգ, - Կազմում է պահանջագիր՝ անհրաժեշտ նյութական ռեսուրսների, շահագործող անձնակազմի թվաքանակի ու որակավորման վերաբերյալ, - Կատարում է աշխատակիցների փաստացի աշխատանքային ժամերի և կատարված աշխատանքի ծավալների հաշվառում:
3.4.2	<p>Կատարման չափանիշները</p>	<ul style="list-style-type: none"> • Աշխատակիցների աշխատանքային ժամանակացույցը կազմված և փակցված է տեսանելի տեղում, • Աշխատանքի բաժանումը կատարված է ըստ աշխատակիցների մասնագիտական պարտականությունների և որակավորման: Տրված են ճիշտ հանձնարարականներ, • Աշխատակիցների աշխատանքի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է համաձայն ներդրված չափանիշների, • Հակասությունների կարգավորմանը ճիշտ լուծումներ են տրված, • Խնդիրների լուծման առանձնահատկություններից ելնելով՝ կայացված են կառավարչական և մասնագիտական ճիշտ որոշումներ, • Անհրաժեշտ նյութական և մարդկային ռեսուրսների վերաբերյալ պահանջագրերը ճիշտ են կազմված, • Հաշվառման տեղեկագրերում առկա են համապատասխան գրանցումներ աշխատակիցների աշխատանքային ժամաքանակի վերաբերյալ, իսկ հաշվառման մատյանում առկա են գրանցումներ կատարված աշխատանքների ծավալների վերաբերյալ:
3.5		<p><u>Խնդիրների բնագավառ 5. Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործական և լաբորատոր փորձարկումներ</u></p>
3.5.1	<p>Աշխատանքային գործընթացները</p>	<ul style="list-style-type: none"> - Հաշվառում է արտադրողականության վրա ազդող գործոնները, գրանցում է պարապուրդները՝ նշելով դրանց պատճառները, - Փորձարկման միջոցով որոշում է ՎՏՇՃՄ և Ս քարշի ուժի մեծությունը

Հ/Հ	Անվանում	Նկարագիր
		<p>տարբեր աշխատանքային ռեժիմներում,</p> <ul style="list-style-type: none"> - Որոշում է վառելանյութի ծախսը շահագործման նորմալ պայմաններում, - Մասնակցում է վերամբարձ մեքենաների ստատիկական, դինամիկական և կայունության փորձարկումներին, - Մասնակցում է ագրեգատների, հանգույցների և դետալների լաբորատոր-ստենդային փորձարկումներին:
3.5.2	Գատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Արտադրողականության վրա ազդող գործոնները ճիշտ են հաշվի առնված: Հաշվառման մատյանում առկա են խրոնոմետրաժի տվյալների և պարապուրդների պատճառների գրանցումները, • Առկա են վառելիքի ծախսի վերաբերյալ չափումների արդյունքների գրանցումները, • Փորձարկումները կատարված են սահմանված կանոններով և փորձարկումների նկատմամբ վերահսկողություն իրականացնող լիազորված պետական մարմնի ներկայացուցիչների մասնակցությամբ, • Առկա են փորձերի արդյունքների գրանցումները:
3.6	<u>Խնդիրների բնագավառ 6. Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների տեխնիկական արատորոշում և նորոգման կազմակերպում</u>	
3.6.1	Աշխատանքային գործընթացները	<ul style="list-style-type: none"> - Կազմակերպում է ՎՏՀՃՄ և Ս տեխնիկական արատորոշում - Բացահայտում է բազային մեքենաների և աշխատանքային սարքավորումների անսարքություններն ու վնասումները և կազմակերպում է ընթացիկ նորոգում, - Կազմակերպում է նորոգում վթարների հետևանքների վերացման նպատակով, - Կազմակերպում է բազային մեքենաների և աշխատանքային սարքավորումների պլանային կապիտալ նորոգում:
3.6.2	Գատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • ՎՏՀՃՄ և Ս արատորոշման արդյունքների գրանցված են հաշվառման մատյանում, • Բազային մեքենաների և սարքավորումների անսարքությունները բացահայտված են արատորոշման ճիշտ տեսակների կիրառմամբ և արատորոշիչ պարամետրերի ճիշտ գնահատմամբ, • Մեքենաների և սարքավորումների տեխնիկական վիճակը ճիշտ է գնահատված, իսկ ընթացիկ նորոգման իրականացման փաստաթղթերը՝ ճիշտ ձևակերպված, • Մեքենաների և աշխատանքային սարքավորումների կապիտալ նորոգումը կազմակերպված է համաձայն պլանային նորոգումների ժամանակացույցի, • ՎՏՀՃՄ և Ս կապիտալ նորոգումը կազմակերպված է սահմանված կարգով՝ ըստ մեքենավարների զեկուցագրերի և մեքենաների նորոգման հաշվառման մատյանի գրանցումների:

Հ/Հ	Անվանում	Նկարագիր
3.7		Խնդիրների բնագավառ 7. Կենսագործունեության անվտանգության ապահովում և բնապահպանական միջոցառումների իրականացում ՎՏՀՄ և Ս շահագործման ժամանակ
3.7.1	Աշխատանքային գործընթացները	<ul style="list-style-type: none"> - Անձնակազմին ծանոթացնում է ՎՏՀՄ և Ս շահագործման և տեխնիկական սպասարկումների ընթացքում կենսագործունեության անվտանգության ու բնապահպանական կանոններին, կատարում է հրահանգավորում, - Վերահսկում է աշխատակիցների կողմից կենսագործունեության անվտանգության և բնապահպանական միջոցառումների կատարումը, - Անձնակազմին ծանոթացնում է ՎՏՀՄ և Ս շահագործման և տեխնիկական սպասարկման ժամանակ կիրառվող հակահրդեհային միջոցառումներին և էլեկտրաանվտանգության պահանջներին, - Ցուցաբերում է առաջին օգնություն կենսագործունեության անվտանգության, բնապահպանական ու հակահրդեհային միջոցառումներին և էլեկտրաանվտանգության կանոնների խախտումների հետևանքով առաջացած պատահարներից տուժածներին, կատարում է պատահարի գրանցում և դրա մասին տեղեկացնում է վերադասին:
3.7.2	Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Անձնակազմը ծանոթ է ՎՏՀՄ և Ս շահագործման և տեխնիկական սպասարկումների ընթացքում կենսանվտանգության և բնապահպանական միջոցառումներին, գրանցամատյանում կատարված է համապատասխան գրառում, • Կառավարչական և մասնագիտական վերահսկողությունը կենսանվտանգության և բնապահպանական միջոցառումների կատարման նկատմամբ ճիշտ է իրականացված, • Անձնակազմը ծանոթ է ՎՏՀՄ և Ս շահագործման և տեխնիկական սպասարկման ժամանակ կիրառվող հակահրդեհային միջոցառումներին և էլեկտրաանվտանգության պահանջներին, համապատասխան մատյաններում կատարված են անհրաժեշտ գրանցումներ, • Անհրաժեշտության դեպքում առաջին բուժօգնությունը ճիշտ է ցուցաբերված, • Տեղի ունեցած պատահարները ճիշտ են գրանցված, փաստաթղթային ձևակերպումները ճիշտ են կատարված:
3.8		Խնդիրների բնագավառ 8. Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների ապամոնտաժում և մոնտաժում, փոխադրում և պահպանում
3.8.1	Աշխատանքային գործընթացները	<ul style="list-style-type: none"> - Մասնակցում է մեքենաների ապամոնտաժման-մոնտաժման աշխատանքների կազմակերպմանը՝ ըստ փուլերի, - Կատարում է մոնտաժման-ապամոնտաժման աշխատանքների որակի ստուգում, վերջնական կարգաբերում, արտադրական փորձարկում և հանձնում շահագործման, - Կազմակերպում է ՎՏՀՄ և Ս փոխադրումը համապատասխան

Հ/Հ	Անվանում	Նկարագիր
		<p>եղանակով,</p> <ul style="list-style-type: none"> - Կազմակերպում է ՎՏՇՃՄ և Ս անվտանգ փոխադրումը, - Կատարում է ՎՏՇՃՄ և Ս ու դրանց պահեստամասերի պահպանման եղանակի և տեղի ընտրություն, - Կատարում է ՎՏՇՃՄ և Ս շահագործական նյութերի և վառելիքաքսանյութերի պահպանման եղանակի ու տեղի ընտրություն:
3.8.2	Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • ՎՏՇՃՄ և Ս ապամոնտաժման-մոնտաժման աշխատանքները կազմակերպված են գործող կանոններին համապատասխան • Ապամոնտաժման-մոնտաժման աշխատանքների որակը համապատասխանում է տեխնիկական փաստաթղթերի պահանջներին, • Փոխադրման եղանակն ընտրված է՝ ելնելով փոխադրվող մեքենայի և առկա (մատչելի) փոխադրման միջոցների տեսակից, ճանապարհային պայմաններից և փոխադրման ժամկետից, • Փոխադրումն իրականացված է անվտանգության տեխնիկայի պահանջներին համապատասխան, • ՎՏՇՃՄ և Ս, դրանց պահեստամասերի պահպանման տեղը և եղանակը ընտրված են՝ ըստ մեքենայի տեսակի, պահպանման ժամկետների և կլիմայական պայմանների, • ՎՏՇՃՄ և Ս շահագործական նյութերի և վառելիքաքսանյութերի պահպանումը կազմակերպված է ըստ սահմանված եղանակի ու կանոնների:
4	Որակավորման I մակարդակի աշխատող (միջին բարդության աշխատանքների կատարում)	
4.1	Լեզուները	<ul style="list-style-type: none"> • Հայերեն՝ գերազանց • Առաջին օտար լեզու՝ B2 • Երկրորդ օտար լեզու՝ A2
4.2	Համակարգիչը	<ul style="list-style-type: none"> • MS Word՝ գերազանց • MS Excel՝ գերազանց • MS PowerPoint՝ լավ • Internet Explorer՝ գերազանց
4.3	Մասնագիտական գիտելիքները	<p>Պետք է իմանա՝</p> <ul style="list-style-type: none"> • վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործումը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի և համապատասխան տեղեկատվական նյութերի պահանջներն ու դրույթները, • մասնագիտական և տեղեկատվական գրականության, աշխատանքային կանոնակարգերում կիրառվող եզրույթները և դրանց իմաստը, • վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործման տեխնոլոգիական գործընթացների հիմունքները,

Հ/Հ	Անվանում	Նկարագիր
		<ul style="list-style-type: none"> • վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների կառուցվածքային առանձնահատկությունները, դրանց նշանակությունը, աշխատանքի սկզբունքները, • վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործման կանոնները, • վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների զննման և անսարքությունների բացահայտման եղանակները, • վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների աշխատանքային պարամետրերի վերահսկողությունը՝ դրանց շահագործման ժամանակ, • աշխատանքի անվտանգության կանոնները:
4.4	Մասնագիտական կարողությունները	<p>Պետք է կարողանա՝</p> <ul style="list-style-type: none"> • բարձր որակավորում ունեցող մասնագետի դեկլարությամբ կատարել ոչ բարդ տեխնիկական հաշվարկներ, մշակել համապատասխան գծագրեր և սխեմաներ՝ համաձայն գործող չափորոշիչների, • կիրառել վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործման վերաբերյալ գործող չափորոշիչները (ստանդարտները), • կարգավորել և կարգաբերել վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաները և սարքավորումները, մասնակցել դրանց անսարքությունների բացահայտմանը և վերացմանը, • հավաքագրել, պահպանել և փոխանցել վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործման ժամանակ վիճակագրական տարբեր բնույթի տվյալներ, • կազմել շահագործման ընթացքում պարզ աշխատանքների կատարման համար անհրաժեշտ փաստաթղթեր (մասնագրեր, դիագրամներ, աղյուսակներ, գրաֆիկներ և այլն), • ունենալ պատասխանատվության զգացում աշխատանքի և աշխատակազմի նկատմամբ, դրսևորել աշխատանքի կուլտուրա ու էթիկա, ապահովել անձնական հիգիենան, • պաշտպանել իր իրավունքները համաձայն աշխատանքային օրենսդրության, • դրսևորել վերլուծական և քննադատական մտածողություն, վարել երկխոսություն:
4.5	Պատասխանատվության աստիճանը	<p>ՎՏՇՃՄ և Մ շահագործող տեխնիկը պատասխանատու է մեքենաների և սարքավորումների աշխատանքի, դրանց որակյալ և արդյունավետ շահագործման համար, ինչպես նաև ՎՏՇՃՄ և Մ շահագործման ընթացքում կենսագործունեության անվտանգության և բնապահպա-</p>

Հ/Հ	Անվանում	Նկարագիր
		նական միջոցառումների կատարման համար: Պատասխանատու է աշխատակիցների միջև նորմալ աշխատանքային հարաբերությունների ձևավորման և նրանց արդյունավետ աշխատանքի կազմակերպման համար: Գործում է ինքնուրույն կամ ավելի քարձր որակավորում ունեցող մասնագետի ղեկավարությամբ: Բոլոր պարտականությունները կատարում է ՎՏՃՄ և Ս շահագործող տեխնիկին ներկայացվող պահանջներին համապատասխան:
4.6	Աշխատանքների բարդության աստիճանը	Միջին բարդության աշխատանքների կատարում կապված վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործման հետ:
4.7	Մասնակցությունը գործընթացներում	Գործընթաց 1, 2, 3, 4, 7, 8
4.8	Կրթության պահանջը	Միջին մասնագիտական, առանց աշխատանքային ստաժի

ՀԱՎԵԼՎԱԾ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(2-րդ տարբերակ)

Հ/Հ	Անվանում	Նկարագիր
1	Մասնագիտության անվանումը	Տեխնիկ՝ վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում (ըստ ճյուղերի)
2	Դերը	Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործման արդյունավետ կազմակերպում, տարբեր աշխատանքային պայմաններում:
3.	Խնդիրների բնագավառը	Կազմակերպում է վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների (ՎՏՃՄ և Ս) ընդունում, զելում, փորձարկում, շահագործում տեխնիկական սպասարկում, նորոգում, ապամոնտաժում-մոնտաժում, փոխադրում և պահպանում, ինչպես նաև իրականացնում է մեքենաների և սարքավորումների անսարքությունների բացահայտում:
4.	Աշխատանքային գործընթացները	
4.1.	Աշխատանքային գործընթաց 1	Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների ընդունում, զելում և հանձնում շահագործման
4.2.	Աշխատանքային գործընթաց 2	Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների տեխնիկական սպասարկումների կազմակերպում

Հ/Հ	Անվանում	Նկարագիր
4.3.	Աշխատանքային գործընթաց 3	Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների արտադրական շահագործման կազմակերպում
4.4.	Աշխատանքային գործընթաց 4	Մարդկային ռեսուրսների կառավարում
4.5.	Աշխատանքային գործընթաց 5	Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործական և լաբորատոր փորձարկումներ
4.6.	Աշխատանքային գործընթաց 6	Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների տեխնիկական արատորոշում և նորոգման կազմակերպում
4.7.	Աշխատանքային գործընթաց 7	Կենսագործունեության անվտանգության ապահովում և բնապահպանական միջոցառումների իրականացում ՎՏՇՃՄ և Ս շահագործման ժամանակ
4.8.	Աշխատանքային գործընթաց 8	Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների ապամոնտաժում և մոնտաժում, փոխադրում և պահպանում
5.	Լեզուները	<ul style="list-style-type: none"> ▪ Հայերեն՝ գերազանց ▪ Առաջին օտար լեզու՝ B2 ▪ Երկրորդ օտար լեզու՝ A2
6.	Համակարգիչը	<ul style="list-style-type: none"> ▪ MS Word՝ գերազանց ▪ MS Excel՝ գերազանց ▪ MS PowerPoint՝ լավ ▪ Internet Explorer՝ գերազանց
6.	Մասնագիտական գիտելիքները	<p>Պետք է իմանա՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործումը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի և համապատասխան տեղեկատվական նյութերի պահանջներն ու դրույթները, ▪ մասնագիտական և տեղեկատվական գրականության, աշխատանքային կանոնակարգերում կիրառվող եզրույթները և դրանց իմաստը, ▪ վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործման տեխնոլոգիական գործընթացների հիմունքները, ▪ վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների կառուցվածքային առանձնահատկությունները, դրանց նշանակությունը, աշխատանքի սկզբունքները, ▪ վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործման

Հ/Հ	Անվանում	Նկարագիր
		<p>կանոնները,</p> <ul style="list-style-type: none"> ▪ վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների գնման և անսարքությունների բացահայտման եղանակները, ▪ վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների աշխատանքային պարամետրերի վերահսկողությունը՝ դրանց շահագործման ժամանակ, ▪ աշխատանքի անվտանգության, շահագործման և տեխնիկական սպասարկումների ընթացքում կենսագործունեության անվտանգության ու բնապահպանական կանոնները, ▪ ՎՏՃԱՄ և Ս ընդունման, նոր ստացված ՎՏՃԱՄ և Ս զելման, ՎՏՃԱՄ և Ս շահագործական փորձարկման կանոնները, ▪ ՎՏՃ մեքենաների և սարքավորումների հերթափոխային, սեզոնային պարբերական (SU-1, SU-2, SU-3), հատուկ տեխնիկական սպասարկումների կազմակերպման կարգը և ձևերը, ▪ ՎՏՃԱՄ և Ս նշանակությունը, դասակարգումը, կառուցվածքը, դրանց աշխատանքի սկզբունքը և աշխատանքային սխեմաները, ▪ ՎՏՃԱՄ և Ս օգտագործվող վառելիքաքսանյութերի և շահագործական նյութերի հատկությունները և կիրառման ոլորտները, ▪ աշխատակիցների աշխատանքային ժամանակացույցի կազմման, փաստացի աշխատանքային ժամերի և կատարված աշխատանքի ծավալների հաշվառման, անհրաժեշտ նյութական ռեսուրսների, ՎՏՃԱՄ և Ս շահագործող անձնակազմի թվաքանակի ու որակավորման վերաբերյալ պահանջագրերի լրացման կարգը, ▪ ՎՏՃԱՄ և Ս լաբորատոր-ստենդային և շահագործական փորձարկումների անցկացման եղանակները, կանոնները, օգտագործվող սարքավորումների աշխատանքի սկզբունքները, ▪ ՎՏՃԱՄ և Ս շահագործման ժամանակ ի հայտ եկող հիմնական անսարքությունները, վնասումները և դրանց նորոգման եղանակները, ▪ ՎՏՃԱՄ և Ս ապամոնտաժման-մոնտաժման աշխատանքների փուլերը, այդ աշխատանքների որակին ներկայացվող պահանջները, ▪ ՎՏՃԱՄ և Ս անվտանգ փոխադրման եղանակները,
7.	Մասնագիտական կարողությունները	<p>Պետք է կարողանա՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ բարձր որակավորում ունեցող մասնագետի ղեկավարությամբ կատարել ոչ բարդ տեխնիկական հաշվարկներ, մշակել համապատասխան գծագրեր և սխեմաներ՝ համաձայն գործող չափորոշիչների,

Հ/Հ	Անվանում	Նկարագիր
		<ul style="list-style-type: none"> ▪ կիրառել վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործման վերաբերյալ գործող չափորոշիչները (ստանդարտները), ▪ կարգավորել և կարգաբերել վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաները և սարքավորումները, մասնակցել դրանց անսարքությունների բացահայտմանը և վերացմանը, ▪ հավաքագրել, պահպանել և փոխանցել վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործման ժամանակ վիճակագրական տարբեր բնույթի տվյալներ, ▪ կազմել շահագործման ընթացքում պարզ աշխատանքների կատարման համար անհրաժեշտ փաստաթղթեր (մասնագրեր, դիագրամներ, աղյուսակներ, գրաֆիկներ և այլն), ▪ ունենալ պատասխանատվության զգացում աշխատանքի և աշխատակազմի նկատմամբ, դրսևորել աշխատանքի կուլտուրա ու էթիկա, ապահովել անձնական հիգիենան, ▪ պաշտպանել իր իրավունքները համաձայն աշխատանքային օրենսդրության, ▪ դրսևորել վերլուծական և քննադատական մտածողություն, վարել երկխոսություն: ▪ Իրականացնել ՎՏՃՄ և Ս ընդունում, նոր ստացված ՎՏՃՄ և Ս զելում, ՎՏՃՄ և Ս շահագործական փորձարկում, ▪ Կազմակերպել ՎՏՃ մեքենաների և սարքավորումների հերթափոխային, սեզոնային պարբերական (SU-1, SU-2, SU-3), հատուկ տեխնիկական սպասարկումները և վերահսկել դրանց ընթացքը, ▪ Կատարել ՎՏՃՄ և Ս շահագործական արտադրողականության և տեսակարար էներգատարության հաշվարկ՝ ելնելով աշխատանքային պայմաններից ▪ Կատարել հիմնական և օժանդակ ՎՏՃՄ և Ս և դրանց լրակազմի ընտրություն՝ ըստ աշխատանքների բնույթի և կատարման ժամկետների, ▪ Կատարել վառելիքաքսանյութերի և շահագործական նյութերի ընտրություն՝ աշխատանքային և կլիմայական պայմաններին համապատասխան, ▪ Պատրաստել աշխատակիցների աշխատանքային ժամանակացույցը կատարել աշխատանքի բաժանում և տալ հանձնարարականներ, վերահսկել դրանց կատարումը, կիրառել աշխատանքի նկատմամբ մոտիվացիոն համակարգեր, ▪ Կազմել պահանջագրեր՝ անհրաժեշտ նյութական ռեսուրսների, շահագործող անձնակազմի թվաքանակի ու որակավորման

Հ/Հ	Անվանում	Նկարագիր
		<p>վերաբերյալ,</p> <ul style="list-style-type: none"> ▪ Հաշվառել ՎՏՃՄ և Ս արտադրողականության վրա ազդող գործոնները, գրանցել պարապորտները, բացահայտել դրանց պատճառները, ▪ Լաբորատոր –ստենդային և շահագործական փորձարկումների միջոցով որոշել ՎՏՃՄ և Ս քարշի ուժի մեծությունը, վառելանյութի ծախսը, ստատիկական և դինամիկական կայունությունը, ինչպես նաև կատարել առանձին ագրեգատների, հանգույցների և դետալների փորձարկումներ, ▪ Կազմակերպել ՎՏՃՄ և Ս տեխնիկական արատորոշման աշխատանքները, բացահայտել բազային մեքենաների և աշխատանքային սարքավորումների անսարքություններն ու վնասումները, ▪ Կազմակերպել ընթացիկ վթարների հետևանքների վերացման նպատակով և պլանային կապիտալ նորոգումներ, ▪ Ծանոթացնել անձնակազմին ՎՏՃՄ և Ս շահագործման, տեխնիկական սպասարկումների և նորոգման ընթացքում կենսագործունեության անվտանգության, բնապահպանական հակահրդեհային միջոցառումների և էլեկտրաանվտանգության կանոններին, վերահսկել դրանց պահպանումը, ցուցաբերել այդ կանոնների խախտումների հետևանքով առաջացած պատահարներից տուժածներին առաջին օգնություն, կատարել պատահարների գրանցում և դրանց մասին տեղեկացնել համապատասխան պաշտոնատար անձանց, ▪ Կազմակերպել ՎՏՃՄ և Ս ապամոնտաժման-մոնտաժման աշխատանքներին, կատարել այդ որակի ստուգում, մեքենաների և սարքավորումների վերջնական կարգաբերում, արտադրական փորձարկում և հանձնում շահագործման, ▪ Կազմակերպել ՎՏՃՄ և Ս անվտանգ փոխադրում, կատարել ՎՏՃՄ և Ս ու դրանց պահեստամասերի, շահագործական նյութերի և վառելիքաբաքսանյութերի պահպանման եղանակի և տեղի ընտրություն:
8.	Պատասխանատվության աստիճանը	<p>ՎՏՃՄ և Ս շահագործող տեխնիկը պատասխանատու է մեքենաների և սարքավորումների աշխատանքի, դրանց որակյալ և արդյունավետ շահագործման համար, ինչպես նաև ՎՏՃՄ և Ս շահագործման ընթացքում կենսագործունեության անվտանգության և բնապահպանական միջոցառումների կատարման համար: Պատասխանատու է աշխատակիցների միջև նորմալ աշխատանքային հարաբերությունների ձևավորման և նրանց արդյունավետ աշխատանքի կազմակերպման համար: Գործում է ինքնուրույն կամ ավելի բարձր որակավորում ունեցող մասնագետի ղեկավարությամբ: Բոլոր պարտականությունները կատարում է ՎՏՃՄ և Ս շահագործող տեխնիկին ներկայացվող պահանջներին համապատասխան:</p>

Հ/Հ	Անվանում	Նկարագիր
9.	Աշխատանքների բարդության աստիճանը	Միջին բարդության աշխատանքների կատարում կապված վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործման հետ:
10.	Մասնակցությունը գործընթացներում	Գործընթաց 1, 2, 3, 4, 7, 8
11.	Կրթության պահանջը	Միջին մասնագիտական, առանց աշխատանքային ստաժի